ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» օգոստոսի 2024թ. № 768

## ԱՐՏԱԿ ՌՈԲԵՐՏԻ ԱՇՐԱՖՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-083-0007-0003 ԵՎ 06-083-0007-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐԻՑ 0,079 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին» թիվ 70-Ա որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19092023-06-0024 վկայականը և Արտակ Ռոբերտի Աշրաֆյանի (ծնված՝ 01.12.1981թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արտակ Ռոբերտի Աշրաֆյանին սեփականության իրավունքով պատկանող, 06-083-0007-0003 և 06-083-0007-0001 կադաստրային ծածկագրերից 0,079 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Հաստատել 06-083-0007-0003 և 06-083-0007-0001 կադաստրային ծածկագրերից 0,079 հեկտար մակերեսով հողամասի ճշգրտված հատակագիծը:
3. Սույն որոշումը տրամադրել ՀՀ Կադաստրի պետական կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» օգոստոսի 2024թ. № 769

## ԱՐՄԵՆ ԳԱՌՆԻԿԻ ՇԻՐՎԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-083-0007-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,059 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին» թիվ 70-Ա որոշումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2405196 վկայականը և Արմեն Գառնիկի Շիրվանյանի (ծնված՝ 03.01.1960թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արմեն Գառնիկի Շիրվանյանին սեփականության իրավունքով պատկանող, 06-083-0007-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,059 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Հաստատել 06-083-0007-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,059 հեկտար մակերեսով հողամասի ահատակագիծը:
3. Սույն որոշումը տրամադրել ՀՀ Կադաստրի պետական կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» օգոստոսի 2024թ. № 770

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-086-0112-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,018676 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՑՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 43.1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 58-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Շենավան բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 06-086-0112-0002 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,018676 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 1990 թվականին անհայտ անձի կողմից կառուցված 153,89 քառակուսի մետր մակերեսով ինքնակամ շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով «ՌԻԳ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված

եզրակացությունը, «Անահիտ Մնացականյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր 2023RMCUY4) և Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը՝ (քաղվածք 06086GTDWPCW) ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Շենավան բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 06-086-0112-0002 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,018676 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 1990 թվականին անհայտ անձի կողմից կառուցված 153,89 քառակուսի մետր մակերեսով ինքնակամ շինությունը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

3. Հաստատել Սպիտակ համայնքի Շենավան բնակավայրում գտնվող 06-086-0112-0002 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,018676 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հատակագիծը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Շենավան, 2-րդ փողոց, 17/1 կիսակառույց» հասցեն (փոստային դասիչ՝ 1801):

5. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» օգոստոսի 2024թ. № 771

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0451-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,073 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1151929 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝060117SPHDP5) և Վալերիկ Մարտունի Աջամյանի (ծնված՝ 13.10.1960թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0451-0006 կադաստրային ծածկագրով 0,073 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Դ. Տեր-Սիմոնյան փողոց, 3-րդ նրբանցք, 18 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» օգոստոսի 2024թ. № 772

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-061-0064-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,10068 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին» թիվ 70-Ա որոշումը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը՝ (քաղվածք՝ 069992EQXABT), «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 842-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Հարթագյուղ բնակավայրում գտնվող, 06-061-0064-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,10068 հեկտար մակերեսով այլ հողերի գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Հաստատել 06-061-0064-0002 կադաստրային ծածկագրով, 0,10068 հեկտար մակերեսով հողամասի հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել «Սպիտակ, Հարթագյուղ, 8-րդ փողոց, 14 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1816):

4. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը և 3-րդ կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ե. Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» օգոստոսի 2024թ. № 773

## ԻՎԱՆ ԳԱՌՆԻԿԻ ՇԻՐՎԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-083-0007-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,063 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին» թիվ 70-Ա որոշումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2405193 վկայականը և Իվան Գառնիկի Շիրվանյանի (ծնված՝ 20.07.1954թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Իվան Գառնիկի Շիրվանյանին սեփականության իրավունքով պատկանող, 06-083-0007-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,063 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Հաստատել 06-083-0007-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,063 հեկտար մակերեսով հողամասի հատակագիծը:
3. Սույն որոշումը տրամադրել ՀՀ Կադաստրի պետական կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 1
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» օգոստոսի 2024թ. № 774

## ՀՐԱՉՅԱ ՄԿՐՏՉԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2007 թվականի հունիսի 13-ի թիվ 22 որոշումը, Սպիտակի քաղաքապետի 2003 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 111 որոշման հիման վրա տրված բնակելի տարածության թիվ 6 օրդերը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06011ENUK5NP) և Հրաչյա Մկրտչի Ղազարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04072024-06-0050 վկայական՝ տրված 04.07.2024.թվականին) « Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս.Շահումյան փողոց, 1/3 շենք» հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի 3-րդ հարկում գտնվող 94,90 քառակուսի մետր մակերեսով երեք սենյականոց բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Հրաչյա Մկրտչի Ղազարյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.
   1) Հրաչյա Մկրտչի Ղազարյան -ինքը՝ ծնված 10.12.1964 թվականին,
   2) Լուսինե Ռազմիկի Աթոյան -կինը՝ ծնված 06.03.1973 թվականին,
   3) Գոհար Հրաչյայի Ղազարյան -աղջիկը՝ ծնված 13.07.1993 թվականին,
   4) Անահիտ Հրաչյայի Ղազարյան -աղջիկը՝ ծնված 28.05.1996 թվականին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանին տրամադրել « Սպիտակ, Սպիտակ, Ս. Շահումյան փողոց, 1/3 շենք, 6 բնակարան» հասցեն:
3. Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Վարուժան Ապրեսյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ օգոստոսի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» օգոստոսի 2024թ. № 775

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԱՇՈՏ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՇՄԱՎՈՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՆԱՀԻՏ ԹՈՒՄԱՆՈՎԻ ՇՄԱՎՈՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «բ» ենթակետով, հաշվի առնելով, որ Աշոտ Վոլոդյայի Շմավոնյանին (3/4) և Անահիտ Թումանովի Շմավոնյանին (1/4) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայրում գտնվող, 06-046-0041-0005 կադաստրային ծածկագրով 0,28006 հեկտար մակերեսով հողամասի վրա 2020 թվականին ինքնակամ կառուցված ավտոտնակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19072024-06-0033 վկայականը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2023C2ARNY, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և Աշոտ Վոլոդյայի Շմավոնյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Աշոտ Վոլոդյայի Շմավոնյանին (ծնված՝ 31.01.1969թ.) և Անահիտ Թումանովի Շմավոնյանին (ծնված՝ 20.04.1972թ.) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով

պատկանող՝ 06-046-0041-0005 կադաստրային ծածկագրով 0,28006 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 79,6 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի ճշգրտված հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Աշոտ Վոլոդյայի Շմավոնյանի և Անահիտ Թումանովի Շմավոնյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Աշոտ Վոլոդյայի Շմավոնյանին և Անահիտ Թումանովի Շմավոնյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 33 536,39 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 1

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«02» օգոստոսի 2024 թվականի N 776

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանի հավելվածի 10-րդ և 21-րդ կետերի՝ հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 16-ի թիվ 505 որոշմամբ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շենավանի «Արեգակ» մանկապարտեզ», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ծաղկաբերի «Ծիածան» մանկապարտեզ» և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոններն զբաղեցնելու համար 2024 թվականի օգոստոսի 15-ին հայտարարված մրցույթներին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել՝ ***որոշում եմ.***

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շենավանի «Արեգակ» մանկապարտեզ», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ծաղկաբերի «Ծիածան» մանկապարտեզ» և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հայտարարել նոր մրցույթներ, որոնք կանցկացվեն 2024 թվականի հոկտեմբերի 30-ին՝ ժամը 14:30-ին:

2. Մրցույթներն անցկացնել Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքում:

3. Մրցույթների անցկացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հրապարակել հայտարարություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 2
ք.Սպիտակ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹՆԵՐ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱԲԵՐԻ «ԾԻԱԾԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սպիտակի համայնքապետարանը հայտարարում է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շենավանի «Արեգակ» մանկապարտեզ» (գտնվելու վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, գյուղ Շենավան 2-րդ փողոց № 45), «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ծաղկաբերի «Ծիածան» մանկապարտեզ» (գտնվելու վայրը՝ ՀՀ Լոռու մարզ Սպիտակ համայնք գյուղ Ծաղկաբեր 2-րդ փողոց, շենք 12) և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» (գտնվելու վայրը՝ ՀՀ Լոռու մարզ Սպիտակ համայնք գյուղ Կաթնաջուր 1-ին փողոց 2 փակուղի 5/1. հաստատությունը գործունեություն է իրականացնում նաև ՀՀ Լոռու մարզ Սպիտակ համայնք գյուղ Գեղասար, 3-րդ փողոց 2-րդ նրբանցք 2 հասցեում) համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) տնօրենների թափուր պաշտոններն զբաղեցնելու համար մրցույթներ (այսուհետ՝ Մրցույթ):

**Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենը՝**

Իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 27-ի թիվ 20-Ն հրամանով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված գործառույթները:

Վերոհիշյալ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների ամսական պաշտոնային դրույքաչափը կազմում է 130 000 (հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

Մրցույթներին մասնակցելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, որոնք՝

1) ունեն բարձրագույն կրթություն.

2) բավարարում են «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված պահանջներին:

Տնօրենների ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթներին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

1) ովքեր դատապարտվել են հանցագործության կատարման համար, և նրանց դատվածությունը մարված կամ վերացված չէ.

2) որոնց օրենքով արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել կամ ովքեր զրկվել են որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) ովքեր նախընթաց երեք տարիների ընթացքում եղել են սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար.

4) 65 տարին լրացած քաղաքացիները.

5) ովքեր ներկայացրել են փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են:

**Մրցույթները կկայանան 2024թ. հոկտեմբերի 30-ին ժամը 14:30-ին՝ Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7):**

Մրցույթներին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի, նախադպրոցական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի՝ բնօրինակները և պատճենները.

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացված փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Դիմումներն ընդունվում են Սպիտակի համայնքապետարանում ամեն օր, ժամը 9:00-ից մինչև 18:00-ն՝ բացի շաբաթ, կիրակի օրերից (հասցեն՝ ք. Սպիտակ, Շահումյան 7, հեռ.՝ 0255-2-25-00):

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2024թ. հոկտեմբերի 15-ը ժամը 18:00-ն:**

Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթն անցկացվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի դրույթներին համապատասխան:

Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի մրցույթը անցկացվում է մեկ փուլով՝ հարցազրույցի միջոցով:

Մրցույթի համար դիմած անձը մրցույթին մասնակցելու համար ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և այլ տեղեկությունների համար կարող են դիմել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ (ք.Սպիտակ, Շահումյան 7, հեռ.՝ 0255-2-25-00):

**Սպիտակի համայնքապետարան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«02» օգոստոսի 2024թ. № 777

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-061-0113-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,1181 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 43.1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 58-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Հարթագյուղ բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 06-061-0113-0006 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,1181 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 1990 թվականին անհայտ անձի կողմից կառուցված 104,75 քառակուսի մետր մակերեսով վարչական շենքի և 6,49 քառակուսի մետր մակերեսով պարսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք

ընդունելով «ՌԻԳ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, «Անահիտ Մնացականյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր 2023FWAWFC) և Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը՝ (քաղվածք 06061ZQ8EFYW) ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 06-061-0113-0006 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,1181 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 1990 թվականին անհայտ անձի կողմից կառուցված 104,75 քառակուսի մետր մակերեսով վարչական շենքը և 6,49 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

3. Հաստատել Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրում գտնվող 06-061-0113-0006 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,1181 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հատակագիծը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Հարթագյուղ, 6-րդ փողոց, 3 շենք» հասցեն (փոստային դասիչ՝ 1816):

5. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«02» օգոստոսի 2024թ. № 778

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-Ի ԹԻՎ 754 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի հուլիսի 26-ի «Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-061-0051-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 1,54081 հեկտար մակերեսով հողամասի հատակագիծը հաստատելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 754 որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրում գտնվող, Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-061-0051-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասից առանձնացված 1,54081 հա մակերեսով այլ հողեր գործառնական նշանակության հողամասը համարել փոփոխված հասարակական գործառնական նշանակության և հաստատել հասարակական գործառնական նշանակության հողամասի հատակագիծը»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 2
ք.Սպիտակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«02» օգոստոսի 2024թ. № 779

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐՋԱՆԻԿԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՆԱՀԻՏ ԱԼՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և 2-րդ մասով, հաշվի առնելով, որ Հովհաննես Նազարյանի ներկայացուցիչ Անահիտ Ալոյանի՝ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարի ոչ իրավաչափ անգործության արդյունքում Հովհաննես Նազարյանին պատճառված 3 000 000 ՀՀ դրամ հատուցելու մասին դիմումի քննարկման համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել լրացուցիչ փաստաթղթեր՝

***որոշում եմ.***

1. Հովհաննես Երջանիկի Նազարյանի ներկայացուցիչ Անահիտ Ալոյանի 2024 թվականի հունիսի 24-ի՝ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարի ոչ իրավաչափ անգործության արդյունքում Հովհաննես Նազարյանին պատճառված 3 000 000 ՀՀ դրամ հատուցելու մասին դիմումի քննարկումը երկարաձգել և դիմումի քննարկման օր նշանակել 2024 թվականի օգոստոսի 12-ին, ժամը 17:00-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 2
ք.Սպիտակ